ՀԱՂՈՐԴԱԳՐՈՒԹՅՈՒՆ
ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ՎԵՀԱՓԱՌ ՀԱՅՐԱՊԵՏԻ ԱԴԴԻՍ-ԱԲԵԲԱ ՈՒՂԵՎՈՐՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

Ողորմությամբն Աստուծո, Նորին Ս. Օծություն Տ. Տ. Վազգեն Ա Ամենայն Հայոց Վեհափառ Հայրապետը Իր շքախմբով Ադդիս-Աբեբա ժամանեց հունվարի 15-ին, ուրբաթ առավոտյան:

Օդանավակայանում Հայոց Հայրապետին անձամբ դիմավորեցին Եթովպիայի Օգոստափառ Կայսր Նորին Վեհափառություն Հայլե Սելասիե Ա-ը, Նորին Բարձր Վսեմություն գահաժառանգ Իշխան Մերիդ Ազմաչ Ասֆա Վոսսենը, կառավարական կազմը, Մեծի Տանն Կիլիկիո Կաթողիկոս Նորին Ս. Օծություն Տ. Տ. Խորեն Ա-ը, Եթովպիայի Եկեղեցու պատրիարքական փոխանորդ Տ. Թեոփիլոս արքեպիսկոպոսը, ինչպես նաև քույր եկեղեցիների ներկայացուցիչները:

Վեհափառ Հայրապետին դիմավորեցին նաև Եգիպտոսի հայոց առաջնորդ Տ. Մամբրե արքեպիսկոպոսը, Եթովպիայի հայոց հոգևոր հովիվ Տ. Կորյուն վարդապետը, Եթովպիայի հայոց գաղութային ժողովի անդամները և հայ համայնքը:

Ամենայն Հայոց Վեհափառ Հայրապետը հանդիսավոր թափորով մուտք գործեց մայրաքաղաքի եթովպական Ս. Երրորդություն Մայր Տաճարը և մաղթանքի աղոթքից հետո առաջնորդվեց Լուլ Մաքոնեն պալատը, ուր իջևանել էին մեկ օր առաջ արևելյան քույր եկեղեցիների հոգևոր պետերը:

Ամենայն Հայոց Վեհափառ Հայրապետը, հունվարի 16-ին, շաբաթ առավոտյան ժամը 9-ին, հանդիսավոր սուրբ պատարագ մատուցեց Ս. Երրորդություն Մայր Տաճարում, Նորին Վեհափառություն Կայսեր և հոգևոր պետերի ներկայության:

Վեհափառ Հայրապետը, հունվարի 17-ին, կիրակի օր, առավոտյան ժամը 10-ին, պատարագեց և քարոզեց տեղի հայոց Ս. Գևորգ եկեղեցում, խուռն հավատացյալ հայ ժողովրդի ներկայության:

Հայրապետական սուրբ պատարագին ներկա էր նաև Նորին Ս. Օծություն Տ. Տ. Խորեն Ա Կաթողիկոսը Իր շքախմբով:

Հունվարի 15-ին, ուրբաթ օր, առավոտյան ժամը 11-ին, աֆրիկյան պալատի մեծ սրահում, Եթովպիայի քրիստոնյաներ Կայսր Նորին Վեհափառություն Հայլե Սելասիե Ա-ի ներկայության և Նրա արքայական ուղերձով, հանդիսավորապես բացվեց արևելյան ուղղափառ հին եկեղեցիների ժողովը:

Հանուն Հայաստանյայց Առաքելական Եկեղեցու, ողջույնի խոսքով հանդես եկավ Նորին Ս. Օծություն Տ. Տ. Վազգեն Ա Ամենայն Հայոց Վեհափառ Հայրապետը:

Հունվարի 19-ին, երկուշաբթի օր, առավոտյան ժամը 9-ին, Վեհափառ Հայրապետի հրավերով, Ադդիս-Աբեբա ժամանեց Երուսաղեմի հայոց ամենապատիվ Տ. Եղիշե սրբազան պատրիարքը, մաս կազմելու համար Հայաստանյայց Առաքելական Եկեղեցու պատվիրակության:

Հունվարի 20-ին, չորեքշաբթի օր, առավոտյան ժամը 11-ին, Ս. Միքայել հրեշտակապետի Եթովպիայի ազգային մեծ տոնին, բացօթյա հանդիսության ժամանակ, Նորին Վեհափառություն Հայլե Սելասիե Ա Կայսեր հրավերով, հանդես եկավ Ամենայն Հայոց Վեհափառ Հայրապետը օրհնության խոսքով, բոլոր հոգևոր պետերի, կառավարական կազմի, դիվանագիտական մարմնի և ավելի քան 100 000 հավատացյալների ներկայության:

Նույն օրը, ժամը 12-ին, Ամենայն Հայոց Վեհափառ Հայրապետը, Տ. Տ. Խորեն Ա Կաթողիկոսի, Երուսաղեմի հայոց ամենապատիվ Տ. Եղիշե սրբազան պատրիարքի և շքախմբի բոլոր անդամների ընկերակցությամբ, պաշտոնապես այցելեց պալատ՝ Նորին Օգոստափառ Մեծություն Հայլե Սելասիե Ա Կայսեր, և հանուն Հայաստանյայց Առաքելական Եկեղեցու, պարգևատրեց Նրան Ս. Գրիգոր Լուսավորչի առաջին կարգի շքանշանով:

Ամենայն Հայոց Վեհափառ Հայրապետը Ադդիս-Աբեբա ժամանել էր մասնակցելու արևելյան ուղղափառ եկեղեցիների ժողովին, սակայն Հայաստանյայց Առաքելական Եկեղեցու մասնակցությունը հանդիպելով որոշ դժվարությունների, Ամենայն Հայոց Վեհափառ Հայրապետը և Մեծի Տանն Կիլիկիո շնորհավարդ Կաթողիկոսը որոշեցին պաշտոնապես չմասնակցել այդ ժողովին:

Նույն օրը, երեկոյան ժամը 8-ին, արքայական պալատում, Եթովպիայի Նորին Վեհափառություն Կայսրը Սաբա թագուհու մեծ խաչի եթովպական առաջին կարգի շքանշանով պարգևատրեց Նորին Ս. Օծություն Տ. Տ. Վազգեն Ա Ամենայն Հայոց Վեհափառ Հայրապետին և մյուս հոգևոր պետերին:

Հունվարի 24-ին, կիրակի օր, առավոտյան ժամը 9-ին, եթովպական Ս. Երրորդություն Մայր Տաճարում, հայկական սուրբ պատարագ մատուցվեց և հոգեհանգստյան հանդիսավոր պաշտոն կատարվեց, ի հիշատակ և ի խաղաղություն ապրիլյան եղեռնի հայ նահատակների հոգիների:

Պատարագեց Նորին Սրբություն Տ. Տ. Խորեն Ա Կաթողիկոսը և քարոզեց Ամենայն Հայոց Վեհափառ Հայրապետը:

Սուրբ պատարագին և հոգեհանգստյան արարողության ներկա եղան Նորին Վեհափառություն Օգոստափառ Կայսրը, Նորին Բարձր Վսեմություն գահաժառանգ իշխանը, պալատականներ, կառավարական կազմը, քույր եկեղեցիների հոգևոր պետերը և եթովպացի ու հայ խուռներամ հավատացյալ ժողովուրդ:

Հավարտ սուրբ պատարագի, Ամենայն Հայոց Վեհափառ Հայրապետը, Տ. Տ. Խորեն Ա Կաթողիկոսը, ամենապատիվ Տ. Եղիշե սրբազան պատրիարքը, եկեղեցական դասը և համայն հայ հավատացյալ ժողովուրդը, հանդիսավոր թափորով, ուղղվեցին դեպի Եթովպիայի անծանոթ վինվորի հուշարձանը և վետեղեցին շքեղ մի ծաղկեպսակ՝ հանուն Հայ Եկեղեցու և հայ ժողովրդի:

Հունվարի 25-ին, երկուշաբթի օր, երեկոյան ժամը 5.30-ին, Մաքոնեն պալատում, Նորին Վեհափառություն Օգոստափառ Կայսրը այցի եկավ Ամենայն Հայոց Վեհափառ Հայրապետին և այս առթիվ հանձնեց թանկագին նվերներ:

Հունվարի 27-ին, չորեքշաբթի, առավոտյան ժամը 10-ին, Նորին Ս. Օծություն Տ. Տ. Վազգեն Ա Ամենայն Հայոց Հայրապետը Իր շքախմբով մեկնեց Ադդիս-Աբեբայից: Օդանավակայանում Վեհափառ Հայրապետին ողջերթ մաղթեցին Օգոստափառ Կայսրը և գահաժառանգ իշխանը, կառավարական կազմը, Եթովպական Եկեղեցու ներկայացուցիչներ և Ադդիս-Աբեբայի հայ ժողովուրդը:

Վեհափառ Հայրապետը մեկնեց դեպի Մայր Աթոռ Ս. Էջմիածին՝ Կահիրեի, Փարիզի և Լոնդոնի վրայով:

ԴԻՎԱՆ ՄԱՅՐ ԱԹՈՌԻ

22 հունվարի 1965 թ.
Ս. ԷՋՄԻԱԾԻՆ